ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 դեկտեմբերի 2024թ. թիվ 995-Ա

ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և ՀՀ կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի թիվ 1043-Ն որոշմամբ, հիմք ընդունելով մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի 02.12.2024թ. զեկուցագիրը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 28.11.2024թ. թիվ 1882-Ն որոշմամբ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված գումարներից 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների հետևանքով տրանսպորտային միջոցների պատճառված վնասի փոխհատուցման գումար հատկացնել թվով 7 քաղաքացու՝ 10666250 /տաս միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար երկու հարյուր հիսուն/ ՀՀ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հնգօրյա ժամկետում հատկացնել գումարը:

Recoverable Signature

X Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081
2024-12-02 18:33:43 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Signed by: GHAZARYAN ARAM 2003720081 Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 2
ք.Վանաձոր